ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«08» դեկտեմբերի 2023թ. ՆՄՈ/774-Լ

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1745-Լ ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի ՆՄՈ/387-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N265-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի նոյեմբերի 28-ի գրությունը.

որոշում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի

մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի «2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումներից օգտվելու և 6000 տոննայից մինչև 9000 տոննան ներառյալ և 15000 տոննա և ավելի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին սուբսիդավորման տրամադրման ընթացակարգերը հաստատելու մասին» N1745-Լ համատեղ հրամանում, ՆՄՈ/387-Լ և N265-Լ որոշումներում կատարված փոփոխությունները և լրացումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Է. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

X

ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Подписано: HOVHANNISYAN EDVARD 2001830505

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ 04047253 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ Ր Ա Մ Ա Ն	Ո Ր Ո Շ Ո Ւ Մ	Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
«07» 12 2023թ	«08» 12 2023թ	«29» 12 2023թ
N 2473 -Լ	N 784 -Լ	N ՄՈ/345 -Լ
ք. Երևան	ք. Արմավիր	ք. Արտաշատ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 1745-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-Ի N ՄՈ/387-Լ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 265-Լ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով, 34-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետերով՝

հ ր ա մ ա յ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 12-ի և Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի 2023 թվականի սեպտեմբերի 13-ի «2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումներից օգտվելու և 6000 տոննայից մինչև 9000 տոննան ներառյալ և 15000 տոննա և ավելի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտներին

սուբսիդավորման տրամադրման ընթացակարգերը հաստատելու մասին» N 1745-Լ հրամանի, N ՄՈ/387-Լ և N 265-Լ որոշումների հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1) 6-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«6. Աջակցությունից օգտվելու վերաբերյալ համաձայնագրի կնքումից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում տնտեսավարող սուբյեկտը՝

1) մթերման ենթակա խաղող ունեցող խաղողագործների անվանական ցանկերը կազմելու նպատակով իր տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմ է ներկայացնում այն խաղողագործների ցանկը, որոնց հետ մինչև համաձայնագրի կնքումն ունի կնքած մթերման պայմանագրեր և այն խաղողագործների ցանկը, որոնց հետ նախընտրում է կնքել նոր պայմանագրեր.

2) Էկոնոմիկայի նախարարություն և իր տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմ է ներկայացնում տնտեսավարող սուբյեկտի հիմնադիր կամ ավելի քան 10 տոկոս բաժնետոմս ունեցող բաժնետեր հանդիսացող անձանց կամ նրանց ընտանիքի անդամների (ծնող, ամուսին, զավակ) անունները և ազգանունները:».

2) 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«10. Սուբսիդավորումը ստանալու նպատակով՝

1) 6000 տոննայից մինչև 9000 տոննան ներառյալ խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտը՝

ա. Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում 5000 տոննա գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

բ. Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմեր է ներկայացնում 5000 տոննա խաղողի փաստացի քանակների գնման ամսաթվից հետո Արարատի կամ Արմավիրի մարզերի տարածքներում տեղակայված մթերման կետերում գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող

փաստաթղթերի պատճենները,

գ. Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում 5000 տոննա խաղողի փաստացի քանակների գնման ամսաթվից հետո Արարատի կամ Արմավիրի մարզերից բացի այլ մարզերի տարածքներում տեղակայված մթերման կետերում գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

2) 15000 տոննա և ավելի խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարող սուբյեկտը,

ա. Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում 10000 տոննա գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

բ. Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմեր է ներկայացնում 10000 տոննա խաղողի փաստացի քանակների գնման ամսաթվից հետո Արարատի կամ Արմավիրի մարզերի տարածքներում տեղակայված մթերման կետերում գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

գ. Էկոնոմիկայի նախարարություն է ներկայացնում 10000 տոննա խաղողի փաստացի քանակների գնման ամսաթվից հետո Արարատի կամ Արմավիրի մարզերից բացի այլ մարզերի տարածքներում տեղակայված մթերման կետերում գնված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ տեղեկատվությունը, համաձայն սույն ընթացակարգի N 5 ձևի՝ լրացված Excel ծրագրով և տնտեսավարող սուբյեկտի կողմից ստորագրված կամ կնքված տարբերակով՝ կցելով 1 կիլոգրամը նվազագույնը 110 դրամով խաղողի գնումը հավաստող փաստաթղթերի պատճենները,

3) 11-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«11. Էկոնոմիկայի նախարարության, Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումները սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում են փաստաթղթերի ուսումնասիրություն և սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերում ու 9-րդ կետում նշված տեղեկատվությունում անհամապատասխանությունների առկայության դեպքում դրա վերաբերյալ 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տեղեկացնում են տնտեսավարող սուբյեկտին: Տնտեսավարող սուբյեկտը 3 աշխատանքային օրվա ընթացքում վերացնում է անհամապատասխանությունները և կրկին ներկայացնում է ճշգրտված փաստաթղթերը, որոնց ընթացք է տրվում սույն ընթացակարգի 10-րդ կետով սահմանված պայմաններով և սույն կետով սահմանված ժամկետներում:».

4) 12-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«12. Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմերի համապատասխան ստորաբաժանումները սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերն ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում են փաստաթղթերի ուսումնասիրություն և անհամապատասխանությունների բացակայության դեպքում կազմում ու Էկոնոմիկայի նախարարություն են ներկայացնում սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված փաստաթղթերը և N 4 ձևին համապատասխան եզրակացությունները:».

5) 12-րդ կետից հետո լրացնել նոր՝ հետևյալ բովանդակությամբ 12.1-ին կետ՝

«12.1. Էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանումը սուբսիդավորման տրամադրման նպատակով Արարատի և Արմավիրի մարզպետների աշխատակազմերի կողմից տրամադրված սույն ընթացակարգի 12-րդ կետում նշված եզրակացությունները և սույն ընթացակարգի 10-րդ կետում նշված այլ մարզերում մթերված խաղողի փաստացի քանակների վերաբերյալ փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող 10 աշխատանքային օրվա ընթացքում եզրակացությունների և փաստաթղթերի ուսումնասիրության հիման վրա 5000 տոննան գերազանցող յուրաքանչյուր 1000 տոննայի կամ 10000 տոննան գերազանցող յուրաքանչյուր 5000 տոննայի համար կազմում է N 4.1 ձևին համապատասխան եզրակացություն և ներկայացնում է Էկոնոմիկայի նախարարության համապատասխան ստորաբաժանմանը, որը 5 աշխատանքային օրվա ընթացքում

սուբսիդավորման գումարը փոխանցում է տնտեսավարող սուբյեկտին:».

6) 13-րդ կետի 1-ին ենթակետում «12-րդ կետում» բառերը փոխարինել «12-րդ և 12.1-ին կետերում» բառերով.

7) Ձև N 2-ի՝

ա. նախաբանում «Շահառու» բառը փոխարինել «Կազմակերպություն» բառով,

բ. 1.6-րդ կետում «Որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին կամ 1-ին և 2-րդ ենթակետի միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրված նպատակային» բառերը փոխարինել «կազմակերպության կողմից ներգրավված» բառերով,

գ. 1.7-րդ կետում «Որոշման հավելվածի 4-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերի շրջանակներում տրամադրված սուբդիդավորման գումարի և ավելի գումարի տարբերություն գումարը վճարել՝ մարելով Որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին կամ 1-ին և 2-րդ ենթակետի միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրված նպատակային» բառերը փոխարինել «կազմակերպության կողմից ներգրավված» բառերով,

դ. 1.10-րդ կետում «1.2» թիվը փոխարինել «1.3» թվով,

ե. 3-րդ բաժնում «Շահառուի» բառը փոխարինել «Կազմակերպության» բառով .

8) Ձև N 3-ի՝

ա. 2.2.1-ին կետում «մթերման կետի տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմից սույն ընթացակարգի 11-րդ կետով» բառերը փոխարինել «սույն ընթացակարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, 10-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի ա և գ պարբերություններով և 12-րդ կետով» բառերով, իսկ «5» թիվը՝ «15» թվով,

բ. 2.4.4-րդ կետում «իր տեղակայման վայրի մարզպետի աշխատակազմ» բառերը փոխարինել «Էկոնոմիկայի նախարարություն և Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմեր» բառերով.

գ. 2.4.5.-րդ կետում «Մարզպետի աշխատակազմի» բառերի փոխարեն լրացնել

«Էկոնոմիկայի նախարարության, Արարատի կամ Արմավիրի մարզպետների աշխատակազմերի» բառերը.

դ. 2.4.7-րդ կետում «Որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին կամ 1-ին և 2-րդ ենթակետի միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրված նպատակային» բառերը փոխարինել «Շահառուի կողմից ներգրավված» բառերով,

ե. 2.4.8-րդ կետում «Որոշման հավելվածի 4-րդ կետի 3-րդ կամ 4-րդ ենթակետերի շրջանակներում տրամադրված սուբդիդավորման գումարի և ավելի չափի գումարի տարբերություն գումարը վճարել՝ մարելով Որոշման հավելվածի 4-րդ կետի 1-ին կամ 1-ին և 2-րդ ենթակետի միջոցառումների շրջանակներում Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի պայմաններին համապատասխան տրամադրված նպատակային բառերը փոխարինել «Շահառուի կողմից ներգրավված» բառերով.

9) Ձև N 4-ը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ համաձայն N 1 հավելվածի.

10) Ձև N 4-ից հետո լրացնել նոր՝ Ձև N 4.1 համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 12-ից ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ	ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ
ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ	ԷԴՎԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ	ՍԵԴՐԱԿ ԹԵՎՈՆՅԱՆ